Երեխաների համար արկածային քաղաքի ստեղծման ներդրումային նախագիծ

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է Երևան քաղաքում ստեղծել երեխաների ակտիվ, հետաքրքիր և էքստրեմալ հանգիստ ապահովող փոքրիկ «քաղաք՝ նախատեսված տարբեր տարիքի երեխաների համար:

Ժամանցային «քաղաքը» նախատեսվում է կառուցել Հրազդան գետի կիրճում, որը կդառնա ուրախ, բազմատեսակ և ապահով զվարճանքի ծառայությունների մատուցման ինքնատիպ վայր, իսկ բարձրորակ սպասարկումը, նոր տեխնոլոգիաները և տարաբնույթ հետաքրքրությունները կապահովեն երեխաների ակտիվ հանգիստը: Այստեղ բարձր որակավորում ունեցող մասնագետները կապահովեն փոքրիկ հաճախորդների մաքսիմալ անվտանգությունը բոլոր խաղերի ժամանակ, ինչպես նաև կմարզեն և կսովորեցնեն թե ինչպես հաղթահարել էքստրեմալ քաղաքի բոլոր խաղային փուլերը և խոչընդոտները: Փոքրիկ քաղաքում առկա բոլոր խաղերը, այդ թվում՝ փեյինթ բոլ, լազերթագ, քվեստ, ժայռամագլցում, թռիչք պարանով, պանդա պարկ, նետաձգություն և փեյինթ բոլային տիր, կվոդրացիկլ, բագգի, լաբիրինթ, վանդակ, ֆուտբոլ, վոլեյբոլ և մյուս բոլոր խաղերը միտված են երեխաների մոտ զարգացնելու տոկունություն, տրամաբանություն և խոչնդոտներ հաղթահարելու ձգտում:

Նախագիծը ներառում է ժամանցի կազմակերպման տարբերակներ՝ ինչպես երեխաների, այնպես էլ նրանց ծնողների համար: Մինչ երեխաները տարված կլինեն խաղերով, ծնողներն իրենց հանգիսը կարող են վայելել միջավայրին համապատասխան սրճարանում, իսկ ցանկության դեպքում իրենց երեխաների հետ միասին կարող են մասնակցել նաև խաղերին:

Սրճարանը նախատեսված կլինի նաև մանկական միջոցառումներ կազմակերպելու համար, որտեղ փորձառու մասնագետները երեխաների համար կապահովեն հիանալի ժամանց և օրը կդարձնեն տոն:

Տեխնիկական ցուցանիշներ	Արկածային քաղաքի մակերեսը կկազմի շուրջ 1 հա:
Ծրագրի ժամկետները	Ծրագրի իրականացման ժամկետը՝ շուրջ 3 տարի:
Ծրագրի արժեքը	Ծրագրի արժեքը կկազմի շուրջ՝ 1 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք–մասնավոր համագործակցության շրջանակներում:
Ներկա իրավիճակ	Առկա է հայեցակարգային նախագիծ: